ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԿՈԼԵԳԻԱ

ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆ

27 դեկտեմբերի 2016 թվականի **թիվ 34** քաղ. Մոսկվա

Էլեկտրական շարժիչներով շարժիչային տրանսպորտային միջոցների ստեղծված նմուշների փորձահավանության համար Եվրասիական տնտեսական միության անդամ պետություններում առկա փորձարկման լաբորատորիաների (կենտրոնների) պատրաստ լինելն ապահովող միջոցառումների ծրագրի մասին

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիան, «Արդյունաբերական համագործակցության մասին» արձանագրության («Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի թիվ 27 հավելված) 2-րդ կետի 2-րդ ենթակետի երկրորդ պարբերությանը համապատասխան,

Եվրասիական միջկառավարական խորհրդի 2015 թվականի մայիսի 29-ի թիվ 10 կարգադրությամբ հաստատված՝ Եվրասիական տնտեսական միության անդամ պետություններում էլեկտրական շարժիչներով շարժիչային տրանսպորտային միջոցների արտադրության եւ օգտագործման խթանումն ապահովող՝ 2015-2017 թվականների միջոցառումների ծրագրի 3-րդ կետի հիման վրա,

Եվրասիական տնտեսական միության անդամ պետություններում էլեկտրական շարժիչներով շարժիչային տրանսպորտային միջոցների արտադրությունը խթանելու նպատակներով՝

հանձնարարում է Եվրասիական տնտեսական միության անդամ

պետություններին՝ Եվրասիական տնտեսական միության պաշտոնական կայքում սույն Հանձնարարականը հրապարակելու օրվանից ուսումնասիրել էլեկտրական շարժիչներով շարժիչային տրանսպորտային միջոցների ստեղծված նմուշների փորձահավանության համար Եվրասիական տնտեսական միության անդամ պետություններում առկա փորձարկման լաբորատորիաների (կենտրոնների) պատրաստ լինելն ապահովող միջոցառումների ծրագրի կատարման հնարավորությունը՝ համաձայն հավելվածի՝ ոլորտի զարգացման գերակա ազգային խնդիրներին համապատասխանության մասով:

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի

կոլեգիայի նախագահ՝ Տ. Սարգսյան

ՀԱՎԵԼՎԱԾ

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի

2016 թվականի դեկտեմբերի 27-ի

թիվ 34 հանձնարարականի

ԾՐԱԳԻՐ

Էլեկտրական շարժիչներով շարժիչային տրանսպորտային միջոցների ստեղծված նմուշների փորձահավանության համար Եվրասիական տնտեսական միության անդամ պետություններում առկա փորձարկման լաբորատորիաների (կենտրոնների) պատրաստ լինելն ապահովող միջոցառումների

	Միջոցառման անվանումը	Իրագործման ձեւը	Կատարման ժամկետը	Կատարողը
1.	Նորարարական տրանսպորտային միջոցներին եւ դրանց բաղադրիչ մասերին ներկայացվող անվտանգության պահանջների կատարելագործումը	Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների (այսուհետ՝ անդամ պետություններ) ակտեր	2018 թվական	անդամ պետություններ

	Միջոցառման անվանումը	Իրագործման ձեւը	Կատարման ժամկետը	Կատարողը
2.	Փորձարկման լաբորատորիաների (կենտրոնների) աջակցության ծրագրերի մշակումը՝ էլեկտրական շարժիչներով շարժիչային տրանսպորտային միջոցների եւ դրանց բաղադրիչ մասերի փորձարկումներն անցկացնելու համար չափիչ սարքավորումներով եւ ենթակառուցվածքով ապահովելու մասով, այդ թվում՝ միջազգային պահանջներին համապատասխանությունն ապահովելու նպատակներով	անդամ պետությունների ակտեր	2018 թվական	անդամ պետություններ
3.	Էլեկտրական շարժիչներով նոր շարժիչային տրանսպորտային միջոցների եւ դրանց բաղադրիչ մասերի, այդ թվում՝ երրորդ երկրներից, համեմատական փորձարկումների անցկացման ապահովումը	փորձարկումների ակտեր	2018 թվական	անդամ պետություններ
4.	Էլեկտրական շարժիչներով շարժիչային տրանսպորտային արտադրվող միջոցների եւ դրանց բաղադրիչ մասերի ստուգիչ փորձարկումների անցկացման ապահովումը	փորձարկումների ակտեր	2018 թվական	անդամ պետություններ
5.	Շահագործման մեջ գտնվող՝ էլեկտրական շարժիչներով	փորձարկումների ակտեր	2018 թվական	անդամ

	Միջոցառման անվանումը	Իրագործման ձեւը	Կատարման ժամկետը	Կատարողը
	շարժիչային տրանսպորտային միջոցների եւ դրանց բաղադրիչ մասերի պարբերական տեխնիկական զննումների անցկացման ապահովումը			պետություններ
6.	Էլեկտրական շարժիչներով շարժիչային տրանսպորտային միջոցների եւ դրանց բաղադրիչ մասերի բնութագրերի գնահատման մաթեմատիկական մոդելների մշակումն ու էլեկտրական շարժիչներով շարժիչային տրանսպորտային միջոցների եւ դրանց բաղադրիչ մասերի՝ արագացված ընթացակարգով փորձարկումների համարժեք մեթոդների կիրառման ապահովումը	գիտահետազոտական եւ փորձարարական-կոնստրուկտորական աշխատանքներ	2019 թվական	անդամ պետություններ